

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ օգնագործման ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈՆԵՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

ՀՀ Կոտայքի մարզպետարանը հայտարարում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթ՝ հետևյալ թափուր ավտոբուսային (միկրոավտոբուսային) երթուղիների համար.

Երթուղու					
N/ N ը/կ	Անվանումը և համարը	Սկզբնակետը (ավտոկայան, ավտոկայարան, երթակարգավարական կետ)	Վերջնակետը (ավտոկայան, ավտոկայարան երթակարգավարական կետ)	Տեսակը (ավտոբուսային, միկրոավտոբուսային)	Սպասարկման համար պահանջվող ավտոբուսների թիվը (ներառյալ պահուստային ավտոբուսների թիվը)
1	Աբովյան - ք. Բյուրեղավան 1-ին թաղամաս	ք.Աբովյան	ք.Բյուրեղավան 1-ին թաղամաս	ավտոբուսային	4

Ց Ա Ն Կ

ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Հայտ.
 2. Ընդհանուր օգտագործման ուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր փոխադրումների կազմակերպման լիցենզիա.
 3. Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայական.
 4. Ավտոբուսների տեխնիկական անձնագրեր (գրանցման վկայագրեր).
 5. Ավտոբուսներին ամրակցված վարորդների՝ վարորդական իրավունքի վկայականներ, աշխատանքային փորձը հավաստող փաստաթղթեր, սահմանված կարգով բժշկական հանձնաժողովի կողմից տրված՝ առողջական վիճակի մասին տեղեկանքներ.
 6. Ավտոբուսի վարձակալման դեպքում՝ վարձակալության պայմանագիր.
 7. Ավտոբուսն այլ տեսակի վառելիքով շահագործելու համար վերասարքավորելու (կահավորելու) դեպքում՝ շահագործման և վերասարքավորման օրինականությունը հաստատող փաստաթուղթ.
 8. Ավտոբուսի վարորդի՝ սեղմված բնական կամ հեղուկ գազով աշխատելու դեպքում՝ օրինականությունը հաստատող փաստաթուղթ.
 9. Ավտոբուսների նախաաղերթային տեխնիկական զննման և բուժզննման աշխատանքների իրականացման հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերը և հիմքերը՝ գործող մրցութային կարգով պահանջվելու դեպքերում.
 10. Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ շարժական կազմի հավաքակալանի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայական՝ գործող մրցութային կարգով պահանջվելու դեպքերում, ինչպես նաև ավտոբուսների ամենօրյա նախաաղերթային տեխնիկական զննումը, դրանց կայանումը և պահպանումն իրականացնելու պայմանագիր՝ գիշերակացով սպասարկվող երթուղիների համար.
 11. Փակ ծրարով ներկայացնում է երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևորի և ուղեբեռի (եթե սահմանված է) փոխադրման գինը, իսկ միջմարզային և ներմարզային երթուղիների համար՝ նաև ըստ նախատեսված միջանկյալ կանգառների:
- Նշված փաստաթղթերի պատճենները ներկայացվում են մեկ օրինակից, կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից ստանձված, կնքված և ստորագրված, իսկ անհատ ձեռնարկատիրոջ կնիք չունենալու դեպքում՝ ստանձված և իր կողմից ստորագրված փաթեթով: Փաթեթի փաստաթղթերը պետք է նույնպես կնքված լինեն հայտատու կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից «Բսկականի հետ ճիշտ է» գրառմամբ և ստորագրությամբ, իսկ անհատ ձեռնարկատիրոջ կնիք չունենալու դեպքում՝ «Բսկականի հետ ճիշտ է» գրառմամբ և ստորագրությամբ, ինչով հավաստվում է դրանց իսկությունը:

Մրցույթի մասնակցության պայմանները կտրամադրվեն մրցութային փաթեթով:

Մրցույթը տեղի կունենա 2014թ. ապրիլի 29-ին ժամը 10.00 –ին Աբովյանի ավտոկայանում:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր (բացի շաբաթ և կիրակի օրերից) ժամը 10.00-16.00 հետևյալ հասցեում ք.Տրապիզոն, Կենտրոն, մարզպետարանի շենք 2-րդ հարկ, քաղաքաշինության վարչություն: Հայտերի ընդունման վերջին ժամկետը 2014թ. ապրիլի 21-ը:

Լրացուցիչ տեղեկությունների համար գանգահարել /0223/ 2-85-27 հեռախոսահամարով:

Մրցույթն անցկացվում է ՀՀ Կառավարության 2001 թ-ի օգոստոսի 16-ի N 762 որոշման պահանջների համաձայն: